ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 21. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

1

100 մ-ից ավելի բարձրություն ունեցող եռահարկ լուսաշտարակը կառուցվել է Փարոս կղզու վրա՝ Ալեքսանդրիայի նավահանգստի մուտքի մոտ: Բրոնզե փայլեցված կորաձև հայելին ցերեկը անդրադարձնում էր արևի լույսը, իսկ գիշերը՝ հայելու առջևում վառվող խարույկի լույսը: Փարոսի լույսը գիշերը տեսանելի էր մի քանի տասնյակ կիլոմետրից և նավորդներին ուղի էր ցույց տալիս դեպի նավահանգիստ:

Քանզի պապիրուսը պատրաստում էին միայն Եգիպտոսում և շատ թանկ արժեր, Պերգամում հայտնագործեցին գրքեր գրելու համար նոր միջոց՝ ***պերգամենտը,*** որը հայերեն անվանում ենք ***մագաղաթ***: Այն պատրաստում էին գառան կամ հորթի լավ մշակված կաշվից: Մագաղաթը նման էր բարակ ստվարաթղթի, ճկուն էր, փափուկ, կրակից դժվար էր այրվում: Այն չէին ոլորում, այլ չորս տակ ծալում էին, էջերը իրարից կտրատում և կազմում՝ ***«տետր»***: Ի տարբերություն պապիրուսի, կարելի էր գրել մագաղաթի երկու երեսին էլ: Ցանկացած քանակի «տետրեր» իրար կարելով՝ կազմում էին գիրք: Կախված օգտագործվող մագաղաթի չափերից՝ գրքերը լինում էին մեծ կամ փոքր: